ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Երանոս, (0262) 6-00-73 yeranos.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 16-Ա

«ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐԻ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՆԵԼԻՔ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղականինքնակառավարմանմասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Երանոս համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի ու Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 2016 թվականի ապրիլի 5-ին կնքված վարկային համաձայնագրի (հետագա տեքստում՝ «Վարկային համաձայնագիր») բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝

Երանոս համայնքի ավագանին որոշում է՝

1. Պարտավորություն ստանձնել Երանոս համայնքի կողմից 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակատվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, հաշվարկված տոկոսագումարները, հանձնավճարները, վերաձևակերպման վճարումները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՎԵՅԱՆ ԳԱԳԻԿ

2. ԲԱՐԲԱՌՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

4. ՀԱՐԻԿՅԱՆ ՋԱՆԻԿ

5. ՂԱՋԱՐՅԱՆ ԽԱԺԱԿ

6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

7. ՄԵԼՈՅԱՆ ԱՐՄԱՆ

8. ՔՅԱՐԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ